ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 45-Ն

29 օգոստոսի 2016թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ԳԻՆՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 66-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ ենթակետի և 2-րդ մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 –րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով այն, որ Հայաստանի հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ քաղաքի Բարեկամության փողոցի թիվ 80 հասցեում գտնվող Հարություն Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող 0.04 հեկտար մակերեսով կառուցապատված հողամասին (կադաստրային ծածկագիր 008-0003-0020-0104) կից՝ 80/2 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող 0.0325 հեկտար հողամասը (կադաստրային ծածկագիր 008-0003-0020-0161), որի չափը չի գերազանցում քաղաքացու սեփականությունը հանդիսացող հողամասի չափից, որպես առանձին գույքային միավոր հնարավոր չէ օտարել աճուրդային կարգով

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.</u>

1. Հայաստանի հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ քաղաքի Բարեկամության փողոցի թիվ 80 հասցեում գտնվող Հարություն Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող 0.04 հեկտար մակերեսով կառուցապատված հողամասի ընդլայնման համար, դրան կից՝ Հայաստանի հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ համայնքի սեփականությունը հանդիսացող 80/2 հասցեում (008-0003-0020-0161 կադաստրային ծածկագրով) բնակավայրերի նպատակային նշանակության 0.0325 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական դասակարգման հողամասը ուղղակի վաճառքով օտարել Հարություն Առաքելյանին:

2.Հողամասի ուղղակի վաճառքի գինը սահմանել տվյալ հողամասի կադաստրային գնի չափով՝ 1 /մեկ/ հեկտարը՝ 5280000 (հինգ միլիոն երկու հարյուր ութսուն հազար) դրամ, 0.0325 հեկտար մակերեսով հողամասի համար՝ 171600 (մեկ հարյուր յոթանասունմեկ հազար վեց հարյուր) դրամ:

3. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված օտարվող հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

Կողմ -5 Դեմ -2 Ձեռնպահ -0

1. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ՈՒՌՈՒՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՄԱԿԱՐՅԱՆ ԲԱԲԿԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

3.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱ

4. ՍԱՀԱԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ

5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍՈՍ

ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ • 18 ԾԱՌԱՅ • ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ք. Մարալիկ
29 օգոստոսի 2016 թվականին